Պարույր Սևակ

Անվերնագիր 12

Մեր թոնիրն այսօր բորբոքուն է.
-Եկ մեր տո՛ւն, եկ խաղա՛նք միասին:
Երազկոտ ու տաք է մեր տունը.
-Եկ խոսե՛նք մեր գալիք տան մասին:
Կրակը բորբոքվում է ներսում,
Եվ ծուխ է դուրս փչում երդիկը.
-Առանց քեզ, ա՜խ, իմ սիրտն է մրսում,
Առանց ինձ չի՞ տխրում սրտիկըդ:
Մայրըս, տե՛ս, խմոր է նա հունցում.
-Կսիրի, թե լինես իր հարսը:
Այդ մասին դու ի՞նչ ես մտածում.
-Թե մերժես՝ կատի՛ քեզ, այդ պարզ է:
Խմորը հորդում է տաշտից դուրս.
-Կարոտս հասել է կատարին:
Ծուխը, որ ելնում է երդից դուրս,
Այդ քեզ է նա կանչում.- Մո՛տ արի:
Սակայն դու իմ կանչը չես լսում.
-Չե՞ս լսում, թե՞ քնքուշ ստում ես...
Ա՜խ, ինչո՞ւ մեծացար այդպես շուտ,
Որ այդպես ո՜ւշ-ո՜ւշ գաս մեր տունը...

10.V.1946թ.

Երևան